

քանի որ աս վերջինները «ազգային» անունը կը կրեն . . . Ասոր համար ալ, այդ նիւթին վրայ թեր ուղեմ գրուածները քիչ անգամ հիմնուած կըլլան ո՛չ—միակողմանի մտածումներու եւ համոզիչ փաստերու վերայ, որոշ եզրակացութեան մը յանգեալու համար :

Զիկայ, ապահովարար մէկը՝ որ համարձակի ուրանայ թէ՛ մեզի համար «ազգային» կամ «մասնաւոր» սիտիզմներէն առաջ ՎԱՐԺԱՐԱՆ միայն պէտք է. վարժարան՝ բոլորին բովանդակ եւ լայն նշանակութիւնովը, որ մանուկը իր բարոյական, մտաւոր եւ տոհմային գաստիարակութիւնը ստանայ բաղադրուած որակովն ու քանակովը :

Աս կարգի վարժարաններու թիւը—ըլլան անոնք «մասնաւոր» կամ «ազգային»—որքան շատ ըլլայ համեմատաբար այնքան աւելի շատ կօզմուի ժողովուրդը :

Երբ անգամ մը, ինչպէս ըսի, վերջնականապէս համոզուած ըլլանք թէ՛ մեր միակ նպատակն է զաւակներուն ջամբել առողջ գաստիարակութիւն, առողջ բարոյական, լաւ նկարագիր վերջապէս. ու այդ պէտքին կրնայ իսկապէս գոհացում տալ այսինչ քաղաքին «մասնաւոր» վարժարանը կամ այնինչ «ազգային»ը, այլեւս ինքնին պէտք է վերջնայ «մասնաւոր» կամ «ազգային» վարժարաններու մէջ խորութիւն դնելու սովորութիւնը : Խօսքս սակայն «կրօնական փրօփականտայի» եւ շահագրտական զանազան հաշիւներով բացուած ուղորմելի «մասնաւոր» վարժարաններուն համար չէ, ուր կը պակսի արդէն մեր սպասած գաստիարակութիւնը, եւ ուր յանձնել մեր մտադր սերունդները ոճիքի հաւասարող սխալ մըն է :

Խնդիր է որոշել թէ, ի՞նչ ծնունդ տուած է զրիւաւորաբար «մասնաւոր» վարժարաններու գոյութեան—մասնաւորապէս մեր միջավայրին մէջ—բան մը՝ որ շատ ալ բացայայտ է : Ուր որ «ազգային» մը կայ եւ օգտակար չի կրնար դառնալ կամ չէ դառցած, հոն պէտքը ստիպած է ծնե-

ցնել «մասնաւոր» վարժարան մը անոնց ձեռքով որոնք կը մտածեն աս պակասին վրայ : «Մասնաւոր» վարժարաններու ուրեմն, «ազգային» վարժարաններու անգոհացուցիչ ըլլալուն ուղղակի կամ անուղղակի արդիւնքն է գրեթէ, Բացառութիւնը : Կամ անշան է :

Կարեւոր է նաեւ գիտնալ որ, մեր «ազգային» վարժարանները, զիրենք չըջապատող ազգակներուն տակ, իրենց ներկայ կազմին մէջ, կրնան օգտակար ըլլալ : Ասոր ժխտական պատասխանը այնքան բացայայտ է որ, ազգային վարժարաններու ամենամեծ չափազանցներն անգամ կը խոստովանին զայն. իսկ, որ ինքնին կերպով մը միտնալովն է : Միշտ կրկնուած ճշմարտութիւն մըն է թէ՛ առհասարակ մեր միջավայրին ամէն կողմի ազգային վարժարանները՝ ապիկար ու ազգայն հոգաբարձու կամ թաղական աղաներու կամայականութեանց ենթարկուած են, անոնց կամքն ու քաջամտութիւնն է կտրող-կացողը, անոնց սահմանափակ տգէտ միտքն է զեկակարելու յաւակնողը : Եւ անոնց զեկակարել կարծած ազգային վարժարաններու մէջ պաշտօնի կը կանչուին յաճախ ճիշդ իրենց պէս ամիջնադարեան բրածոները, որոնց Գիտելու, դասուլու, ուղղելու վարելու համար յանձնուած ապագայ ժողովուրդը, կը խորթացնեն, կը չփացնեն ու կը փճացնեն : Ու եթէ կայ բացառութիւն կազմող լաւ ուսուցիչներ, որոնք թարեազդարար քիչ քաղաքներ մտաք ունեցած են ազգային վարժարաններու մէջ, անոնց ալ ձեռքը-ոտքը կապուած է գրեթէ, անոնք ալ չեն ունենար ազատութիւնը կատարելու, առաջ տանելու վարժարանը, իրենց ուղած եւ օգտակար դատած ձեւովը :

Պատիկ չեղում մը, պատիկ ըմբոստացում մը վարիչ մարմիններու լղրճուկ կամքին զէմ, արդէն պատճառ կըլլայ որ քիչ ատենէն ուրիշ անարժաններ յաջորդեն այդ լաւերուն :

Պիտեմք ինչպիսիք ալ մեր ազգային վարժարաններու անգոհացուցիչ վիճակ մը ունենալուն գլխաւոր

պատճառներէն մէկն է : Ամէն տարի պիտեմք յաճախակի նուազումը պատճառ կըլլայ որ ուսուցիչները հրաժարին՝ բաժանեցնուող անկարողները յաջորդելու համար, ծրագրները փոխուին, աւելի անգոհացուցիչները փոխանորդելու համար, ու այսպէս—տարի նոր, ուսուցիչ նոր, ծրագիր նոր . . .

Կարճ խօսքով վարիչ մարմիններու ապիկարութեան պատճառով տիրիւնի պահպանման անկարելիութիւն, պիտեմք աղքատութիւն, պաշտօնավարութեան չըջանի անկանոնութիւն, աւելցուցէք ասոնց վերայ տեղական հազար ու մէկ անպատեհութիւններ, ուսուցչական անհամբարախիտութիւններ, թաղական եւ հոգաբարձուի սովորական անվերջ կոխներ-որոնց ամէնն ալ պիտի գան ձեզ աւելի հաստատելու այն համոզման մէջ թէ՛ մեր ազգային վարժարանները՝ չըջապատուած աս ծանօթ աղակներով անկարելի չէ որ սպասուած օգուտը արտադրեն երբ պատճառ կըլլան, կրսեմ, որ շատ մը ծընողներ իրենց զաւակները «օտար» կամ «կրօնական փրօփականտայի» համար բացուած վարժարաններ գրգռկեն երբ խել մը ուսուցիչներ այդ պայմաններու տակ, հակառակ իրենց պարտականութեան, չեն կրնար օգտակար դառնալ ազգային վարժարաններու մէջ, այն ատեն կանոնաւոր մասնաւորներու գոյութիւնը անհրաժեշտ պահանջ ու պէտք կը դառնայ :

«Մասնաւոր» վարժարան մը, իրրեւ վարժարան միշտ օգտակար կրնանայ ըլլալ, երբ ան իրեն նպատակ ընտրած է եւ ուղղակի ձգտում ունի, ինչպէս ըսի, տոհմային կամ ազգային մտքը եւ առողջ գաստիարակութիւն մը տալ, եւ թէ՛ ծրագրով, թէ՛ ուսուցիչով, թէ՛ մանկավարժական ուղղութիւնով կատարեալ առաւելութիւն ունի ազգային վրայ : Մասնաւոր վարժարան մը անպատճառ որոշ գաստակարգի մը անհանդուրձը ըլլալ սահմանուած չէ քանի որ գաստակարգային անազին տարբերութիւն մըն ալ գոյութիւն չունի ար-

դէն պուրկարհայոց մէջ, «Մասնաւոր» վարժարան մը իր աս առաւելութիւններով մէկտեղ, երբ դիւրամտաշելի մտաքով մը, ի հարկին ձրի, կը բանայ իր դոնները ժողովրդին ամէն գաստակարգի զաւակներուն առջեւ, շատ մեծ օգուտներ կրնայ արտադրել, Հոս ալ այն ատեն բուն ապագայ ժողովուրդն է որ կը պատկերանայ, իր յանդուգն նկարագիրներով ըմբոստ հոգիներով, որոնք կը սնանին մաքուր եւ հաւասար միտնորտի մը մէջ հոգատար ձեռքերու տակ : «Մասնաւոր» վարժարան մը իր աս եւ ուրիշ օգուտներուն հետ, անազին ծառայութիւն մատուցած չըլլալ արդեօք, երբ «ազգային» վարժարանն զգոհ ծնողներու զաւակաց կարեւոր մէկ մասը գտնէ իր մէջ ընդունելով օտար վարժարաններու մէջէն ընդունուելիք օտարացուած մտանցէն կազմած անոնք :

Ինչ որ ալ առարկեն շատեր, կանոնաւոր մասնաւոր վարժարան իր ուղղակի օգուտն զատ ունի նաեւ իր անուղղակի օգուտները, մրցման մէջը գնելով ազգային վարժարանները : Ո՛վ կրնայ ուրանալ, որ ժամանակէ մը ի վեր մասնաւոր մէջ վարժարաններու մասին գրուածներուն, ազգային վարժարանները կստանան արեւելեան ջանքերուն մէջ ալ մասնաւոր վարժարաններու գոյութիւնը իր որոշ դերը չէ ունեցած : Պուրկարհայ մէջ՝ ուր տարիներով Մասնաւոր վարժարաններ գոյութիւն ունեցած չեն, Ազգային վարժարանները լծացած, անօգուտ հաստատութիւններ դարձած են : Վարժարաններու մասին ներկայիս մէջ եղած շննազատութիւնները սակայն, չեն նշանակել թէ վարժարանները աւելի 10-15 տարի առաջուան գտնուած դրութեան մէջ են, չէ՛, այլ անոնց ալ աւելի առաջդիմելու պէտքն է որ կը զգացուի :

Պոյսոյ մէջ ենք, ուր մեր Ազգային վարժարանները լուրջ հակողութեան ներքեւ են, միօրինակ ծրագրով, աւելի կանոնաւոր պիտեմք կը կատարուին, կրկին գոյութիւն ունանալու յարանգիստով իրրանցումի ու ընդհարումի պիտի վերածուէր : Ամենեւնի շատ յարձակողը երիտասարդ հայրուկ մըն էր, զէմքը տասնամեակէն դիպած երկար, չի կրտրուած ու խառն, չի սանտրուած մաղբով ու մոլեգնութեան վառուած կապոյտ աչքերով, Բան մը չէր խօսեր, իր ձայնը կատարութիւնէն մարած էր :

Բայց Մաքէտօսսքին որոտածայն կը դոտար եւ իր արիւնալի աչքերով մաճաւներուն շնչտակի կը նայէր : — Կը ծաղրէ՞ք հո, թրքասերներ, բարբարոսներ : Ամօթ երեսպական ազգին . . . Եթէ անգամ մըն ալ ձեր խօսքիւ լսեմ, ձեր աղոթները կը կօտրուան . . . Կը յիշէ՞ք Մաքէտօսսքին ո՞վ ըլլալը, կամ քրիստոնեայ եղիք եւ կամ կրտսուեցէք այստեղէն . . . Պուրկարհայ կրակի մէջ կը խորովուի իսկ զուք կը յանդգնիք ծաղրելու . . . ձեր թուրք հերոսները տեսած չենք եւ պիտի տեսնանք, ինչպէս պիտի ցրուին . . . մինչեւ վերջը պիտի ջարդուինք, կեցցէ՛ զօրապետ Գէրնա-կիւ :

— Անկցի թուրքիտն, գոչեց չոր

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ի. Վ Ա Ջ Ո Վ

ՈՋ ԿՐ ԽՂ ՃԱՆ, ՈՋ ԿՐ ՍԽԵՆ

XIV

(Շար. Ասիտոյ քիւեմ)

— Հապա գիտէ՞ք թէ ինչ պատճառաւորութիւն ցուցուցեր են գաստարանին մէջ գողութեան համար մեր յարգելի պարոնները . . .

— Ի՞նչ : — Ոսկի մը տամ եթէ գիտնաս : Դուք Պ. Կօվէտարով, ինչ կը մտածէք :

Եւ ձաթած այտը լիբր ու ստոր ծիծաղով մը Կօվէտարովին նայեցաւ : — Երեւակայեցէք, գատարանի մէջ խօստովաներ են իրենց գողութիւնը «ազգային» նպատակով եղած ըլլալը . . . Հա՛, հա՛, հա՛ :

— Ի՞նչ դարձեալ ազգայնութիւն ըսաւ, կրօնովը իր կողորդի բոլոր ուժովը պոսայով, — հիմա բոլոր աւազակները ազգային են : Գան ազ-

գի անուշով քեզ կողոպտեն, տկորցնեն, զէջ բան չէ : Այսօր բոլոր պատուաւոր խօսքերը մօրը մանածը ծախողներու բերին է նուայեր : Անցեալ տարի Սթալինի պարտէզը ասոնք չէին իմ սիրիտոր գողցողները եւ գինեաւան մը մէջ ազգային փառքի համար խմեցին զուլա պաղեցաւ զայն փնտռել :

Կօվէտարօ որ մտախոհ կը նստէր, ակամայ խնդաց կրօնովին առանց մազի պսպղակ կրօնակ գլխուն նայելու :

Պարոն կրօնով սա նշմարեց, Կօվէտարովին ծիծաղը զայն շատ կատաղեցուց :

— Է՛, պարոն Կօվէտարով կը խնդա՞ք հա՛, Շա՞տ ծիծաղելի բան է : Աս «ազգային տառապալներու» նրկատար ի՞նչ ունիք ըսելիք, որոնք գոնեւ կը կտորեն, երկաթէ քասաները կը ծակեն :

— Կրսեմ որ մե՛ք պուրկարհայ սիրտ չունինք, վեհանձնութիւնը մեզի անանօթ զգացում մըն է, պարոն կրօնով :

Ձաթած սյտով ու ապուշ նայուածքով պարոնը աւելի գոռոզ կրպարանք մը տաւ : — Վեհանձնութիւն : Բաղդախիդիր-

ներուն ալ, որոնք ազգային պատիւը կարտաւարեն ու կը խախտուակեն : Փոխանակ աշխատելու պատուաւոր մարդիկներու քասաները կը կտորեն եւ յետոյ ալ կրսեն որ երկու հազար նաբուլօն գողցած են ոչ թէ իրենց համար այդ իբր թէ նոր խուճի մը չինելու համար, վեհանձնութիւնն :

Եւ ձեր ըսածը : Կամ ճշմարիտ է, ըսաւ մէկէն Կօվէտարովը, գուք կօտրուած բարա մը չէք տար այսպիսի նպատակներու . . . Ձաթած այտով պարոնը իր հայրենասիրութիւնը վիրաւորող խօսքերէն բորբոքեցաւ : Ետանդով պաշտպանուելու ստիպուած եղաւ, աւելի ատոր համար որ կրօնովը բացակայ էր :

Յանկարծ աղաղակներ ու աղմուկներ վիճարանողին խօսքերը ընդմիջեցին : Ամէնքն ալ սրճարանի դիմացի անկիւնը աչքերնին դարձուցած էին, ուր երկու հոգի բարձրաձայն կը կոռէին երկու մաճաւներու հետ եւ որոնց իրենց բըռուեցքները կը ցուցնէին :

Հայրուկներն էին որոնց մօտ Մաքէտօսսքին տեսանք : Սրճարանի ծառաները կուռին առաջը առնելու համար ճիգ կը թափէին, սակայն աղմուկը կատել-

նեցած են Պէրպլեբաններ, Մէզպուրե-
եաններ, որոնց օգուտը ո՛վ չի հաս-
տատար :

Յիւրիպէի մէջ ալ բարձրագոյն նա-
խակրթարանի մը պէտքը որ զգալի
դարձած էր ժամանակէ մը ի վեր,
քիչ օրէն պիտի իրագործուի : Աչքի
ստղեւ ունենալով առ Մասնատր
բարձ. նախակրթարանը հիմնող ու-
սուցչական խումբը, այժմէն վստա-
հարար մեծ յոյսեր ունինք եւ շատ
բան կրնանք ակնկալել անոնցմէ :
Ի՞նչ ինչ անհրաժեշտ եւ արդարացի
պատճառներ գոյութեան իրատունք
կուտան անոր, եւ թէ ի՞նչ կարեւոր
պակաս մը կուգայ գոցել ան, քիչ
ատենէն ատոր ալ անդրադառնալու
ատի՞թ պիտի ունենամ :

Առանց անուններէ խորհելու, նա-
յինք նախ Ք՛է՛ աշխնչ կամ այնչնչ
մասնաւոր վարժարանը գերծ է կրօ-
նական փրօփականտար թաղուր նպա-
տակներէ, յետոյ աչքի ստղեւ ունե-
նանք վարժարանին ուսուցիչներուն
կարողութիւնը, նկարագրը, անոնց
ուղղութիւնը, ծրագիրը, անոր ա-
ռուելութիւնը միւս վարժարաննե-
րէն, եւ անկից ետք քաջալերենք զա-
նի բոլոր ուսուցիչիս կրնայ առարկուել
որ ուժերու բաժանումով ոչ մէկ վար-
ժարան կատարեալ ըլլալու կարելի-
ութիւն չի պիտի կրնայ ունենալ, եւ
պակաս պէտք չէ մտնալ որ մրցման
մէջ միշտ լաւն ու ուժովը կը մնայ
ու կը յարաւելէ, ուրկէ օգտուողը
ժողովուրդը կը լլաւ : Մեզի կը մնայ
օգտակարը միայն քաջալերել զիս-
նայ, ու պիտի օգտուինք : (*)

Հրանդ—Ժիրալյո

Յիւրիպէ Օգոստոս 3

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ

Պարտումսի 327 թուով Պժո-
ղովրդային հերոսին ուղղուած
բաց նամակիս իբր պատասխան
«Խօսք մը» վերնագրով գրութիւն
մը տեսայ տեղական թերթի մը
51—52 թիւերուն մէջ :

Հարկ չեմ տեսներ նոյն գրու-
թեան մէջ շոշափուած բոլոր կէ-
տերուն պատասխանել, որովհե-
տեւ ատենք իմ մատնանի ընելու
զած հարցերու հետ կապ չունին,
եւ կարգ մը տաղակալի երկարա-
բանութիւններով լեցուած են,
որոնք ինձի կասկածել կուտան
յօդուածագրին անկեղծութեանը
կամ իր պաշտպանած անձը իս-
կապէս ճանչցած ըլլալուն վրայ :
Երկու պարագային մէջ ալ Պ.
յօդուածագրին գրութիւնը լըր-
ջութեան հանգամանքէն զուրկ
նկատելու կարող եմ :

Պ. յօդուածագիրը կերեւայ
թէ հրապարակ նետուելու յա-
խուռն մարմալէն բռնուած՝ բո-
լոր կարելի ճամարտակութիւն-
ները շոշալած է պատահական
«հերոս» մը հասցէին, որ այ-
սօր դիպուածը շահագործելու
ճարպիկութեամբ միայն կրնայ
հերոսացած նկատուիլ, և յոյ հո-
յակապ ապուշ մարդը իր պա-
տահարար ու առանց կանխա-
մտածութեան կատարած մէկ
գործը այսօր իրեն զրամագլուխ
բրած՝ խնդճ միամիտները շա-
հագործելու ելած է : Որքան
մտաւոր անկում ունենալու է
մարդ գրելու համար այնտեսակ
խօսքեր, զորս պիտի զգուշանա-
լինք նոյնիսկ ամենէն յայտնի
դիւցաղներու հասցէին ուղղելէ :
Պ. յօդուածագիրը, ճանկիւ-
եանի շոշալած իր պաշտամունքի

հասնող հիացական տողերէն ան-
գին ի՞նչ խօսք պիտի կարենայ
գտնել երբ Խաբէէն մը, Ժիրայր
մը գովաբանել հարկ ըլլայ :
Այդ տեսակ աւելորդաբանու-
թիւններով գրութեան ծանրա-
բեռնելը արգէն ըսածին վրայ
վստահութիւն չուենալու նշան
է : Իսկ յայտնի ստորագրութեամբ
գրուածի մը զէ՛մ ծածկանունով
երեւնալն ալ պատասխան մը առ-
նելէ վախնալ չի՞ նշանակեր մի-
թէ :

Քանք հիմա բուն խնդրին :
Ժողովրդային Միութեան մը
գոյութիւնը յայտնելու սահմանէ
դուրս յանդիմութիւն կը նկատէ
Պ. յօդուածագիրը, չուզելով
մասնութիւն ըսել իբր թէ, Խայց
կը մոռնա՞յ որ թերթերը իմ գրու-
թեանս առաջ կամ վերջը այդ
Միութեան անունով հրատարա-
կաւ կոչեր ուղղած էին :

«Միութիւն» մը երբէք պար-
տաւոր չէ անձերու հետ համե-
րաշխութեան յանգիլ կրնէ Պ.
յօդուածագիրը, առանց գիտնա-
լու որ ճանկիւլեան տեղս ժողո-
վրդային միութիւն կազմել ու-
զող անձերուն հետ ալ համերաշ-
խութեան չէ յանգած ու չի կըր-
նար յանգիլ, եւ մենք արգէն
մատնացոյց ըրած էինք անոր
անդառնալիօրէն ողորմելի ձեզ-
տումները :

Պ. յօդուածագիրը ի՞նչու չըմ-
բաներ ցոյցի մասին ըրած
գիտողութիւնս : Ես այդ արար-
քը չէի մեղադրեր, այլ կուզէի
ցոյց տալ կարգապահութեան
պակասը, որ կաղմակերպութեան
մը մէջ ամենէն կարեւոր պա-
հանջքն է :

Ես Պ. յօդուածագրին միւս կէ-
տերուն չի պիտի պատասխանեմ

որովհետեւ կը տեսնեմ որ անի-
կայ ժամանակակից անյուզարձին
բոլորովին անտեղեկութեւ ու իր
գիտցածներն ալ իսողած առ-
նուած տեղեկութիւններ են :

Թ. ՓՈՒԱՏԱՆ

Վառնա, 4 օգոստոս

Շ Ն Ո Ր Շ Ա Կ Ա Լ Ի Բ

Յանուն մարդկութեան հաճե-
ցէք ձեր պատուական թերթին
սուղ էջերէն միոյն մէջ զետեղել
յետագայ երկտողս :

Քանի մը օրեր առաջ երբ Յի-
ւրիպէէն ընտանեօք դիպի Պուք-
րէշ կը տեղափոխուէի, ճամբոր-
դութեանս միջոցին յանկարծ մէկ
տարեկան պղտիկ տղաս հիւան-
դացաւ : Ստիպուեցայ կէս ճամ-
բան վար իջնալ :

Մտակայ կայարանն էր Բլէվ-
նա, սոյն կայարանը իջնելու՝
ուղեցի օթել մը երթալ և պէտք
եղած դարմանը ընել աղուս,
բայց դժբաղդարար մէկ օր վերջ
տղաս մեռաւ : Հոս գտնուող օթել
Մօսկուաի տէրը Պ. Խրիստօ Կէօբ-
կէֆ տղուս թէ հիւանդ և թէ
ահուան ատեն մեծ հոգածութիւն
ցոյցտուաւ ինձ անձանօթ քաղա-
քի մը մէջ պատահած այս անա-
կնկալ ալէտին ատեն, որով զիս
շատ երախտապարտ ձգեց :

Այս առթիւ կուգամ հրապա-
րակաւ շնորհակալութիւնս յայտ-
նել Բլէվնայի Օթել Մոսկուայի
տիրոջ Պ. Խրիստօ Կէօրկէֆին :

Գեորգ Աղաւանս

Պուքրէշ, 7 օգոստոս

(*) Ներկայ յօդուածը մեզ կը ստի-
պէ յաջորդ անգամ կրկին վերադառ-
նալու մասնաւոր վարժարաններու
խնդրին :

Մ. Խ.

զոյնը հետոս ուրիշ հայրուկ մը եւ
տախտակամանին զարկաւ ուսուցիչը
այնպիսի ուժով որ սեզանները շար-
ժեցան :

Ամբողջ հասարակութիւնը ոտքի
ելլելով վիճողները չըմպատեց :
Մաճառները սեղի չի տուին եւ
սկսան գերմաներէն հայհոյել : Ա-
նոնցմէ մէկը դեռ ձեռք բռնած էր
Նայէ Ֆրէյէ Բոնէսէ՞ թերթը : Մե-
ծամասնութիւնը կաղմկէր եւ բացէ
ի բաց մաճառներուն կողմէն էր, ո-
րոնք քաջալերուեցան, համակրու-
թիւնը իրենց կողմը տեսնելով : Պու-
կար հայրուկները առանձին էին :
Կրօնովին կոկոզային ձայնը կը լըս-
ուէր, որ ոտքի ելած բայց առանց
կուռողներուն մօտենալու, ուժգին
կը պտար :

— Սքանաւ, սքանաւ, հա հոս
ալ արբածներ :

Բնականաբար այս նախատական
խօսքերը մաճառներուն չէր պստիա-
ներ, իր երկու խօսակիցները սլճա-
բանէն դուրս ելած էին արգէն :

Կօվետարով մէկէն խոնուա՞յ ամ-
բօխը պատուելով մոխրանած երիտա-
սարգ հայրուկին մօտեցաւ, որ յար-
ձակողական դիրք բռնած էր, Հայ-
գուկի ձեռքը բռնելով համախոսական
ու պաղտոտական ձայնով ըսաւ :

— Պրըքով կաղաչեմ ձգէ :

Եւ զայն իր թեւն առնելով դուրս
բերաւ առ թխուրէն ու սեզանի մը
մօտ նստեցուց, ուր լուռ, զգոյշ ու-
րիշ հայրուկ մը կը նստէր, երկար
հիւանդոտ զէմքով, անխնամ խորա-
նման մօրուքով եւ իր կեղտոտ ճակ-
տին գլխարկ մը անդուցած : Ան
կուռիին չի մասնակցեցաւ, Կօվետա-
րով բարեւեց առանց զայն ճանչնա-
լու : Ես մայրը Պրախլայի ուսուցիչ
Վլատիքօֆն էր :

Հինգ տարուան բանտարգելու-
թեան զատապարտուած, Պրըքովի
Հաճիի ու Պեպրովօքիի հետ, Բէթ-
րէսքօի քասան կտրելու համար, որ
ժողովի մը մէջ արուած որոշումին
համեմատ կատարած էին, որպէս զի
կարողանան խումբը զինել, հագուե-
ցնել եւ անոր ամէն պէտքերը հայ-
թսլթել, առանց որուն կարելի չէր
օգտակար ըլլալ, Վլատիքով երեք տա-
րի պստիկէն յետոյ բանտէն փախած
հագուեցանքը փոխած, իր ձգած ըն-
կերներու մօտէն էր եկած :

Չորս հայրուկներու պատիժի յա-
րաբերական թեթեւութիւնը աւելի
փաստարանին ճարտասանութեան կը
պատկանէր : Գատաւարութեան օրը

խուռն բազմութեան ներկայութեանը
փաստարանը չորս ամբաստանեալնե-
րուն իրապէս գողութիւն գործած
ըլլալը դատարանին առաջ ճանչցաւ
(բան մը որ կարելի չէր ուրանալ)
բայց ամենայն յամառութեամբ ու
եռանդով գողութեան բուն շարժա-
րիթներուն վրայ ծանրացաւ, յստակ
ու համոզիչ լեզուով մարդը ոճրագոր-
ծութեան զրդող բոլոր սկզբնապատ-
թեան ու հանրութեան առջեւ զժազգ
զո՞ համարեց յանցաւորը : Գրացի գե-
րի սզգին կայութիւնը լայնօրէն ու
երկարօրէն բացատրեց ու ցուցադրեց
իրենց ազատութիւնը գտնելու հա-
մար իր դաւակներու ջանքերը ու զո-
հողութիւնները յիշեց յեղափոխու-
թեան բազմ-ստէպ փորձերը, որոնք
հազարաւոր զժազգ զոհերու արիւ-
նով խեղճուեցան, զրուատեց «Հը-
սուովի վեհանձն թուներու» հիւրըն-
կալ երկիրը, Պուկարիոյ ազատ-
գրութեան դատին պատճառով ստուապ
եալներուն շնորհած եղբայրական սա-
պնջականութեան համար ցցուց խում-
բի մը սպառազինութեան նրբական
սահաբն պահանջներու կարիքը, ո-
րոնցմով արեան նախճիրներու մէջ

լողացող ժողովուրդի մը վերջին հո-
գեվարքի աղաղակներուն օգնութեան
պիտի երթային պուկար հայրենասէր-
ներու տաք գրութիւնները այդ հոսանքին
ենթարկուած՝ անգամ մը վճատած էին
միջոցներու մէջ ընտրութիւն չընելու :
Մինչեւ իսկ իրենց ետանքէն չափա-
զանց թանկ սղին իր մը, իրենց պա-
տիւր զոհարելիցին միմիայն Հայրե-
նիքի փրկութեան սիրուն, Հայրե-
նասիրութի նը ու ձեռնարկին վեհու-
թիւնը ամէնն ալ կարգաբացնէր, Վեր
հանեց ամիսառանձաններու վեճ
նպատակը որոնք երբէք գող ըլլալու
համար ծնած չէին, բայց էն վեհան-
ձըն զբաղումներէ ու բարձր նպա-
տակներէ առաջնորդուած, այդպէս
եղան : Գրաւոր եւ ուրիշ վկայութեւ
թերով ապացուց թէ, իրապէս էայն
ատեն խումբ մը կը կազմուէր, եւ
«զրամի պէտքը կար» : Ամբաստան-
եալներու անհատական նկարագիրը
մատնացոյց ըրաւ, մանաւանդ Վլա-
տիքովը, գործիչ ու ազգային ու-
սուցիչ ցուցնելով, իսկ Պրըքով
հայրենասէր բանաստեղծ (Հաճիիի եւ
Պէպրովօքի մասին բան մը չը յիշեց :

Թարգ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Շատ ունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Աթլէնքի մէջ ձեռնուած խահուէ ծախող երկու Հայեր, կը գըրէ Արեւելք, նոյն քաղաքին Բըրասիլոն փողոցը գտնուող սրճարանի մը մէջ՝ եկեղեցականութեան արտաքուստ քահանայի մը վրայ յարձակելու և անոր փակեղը գլխէն հանելու են: Աստիկանութիւնը քննութիւն կատարելով հրատարակել է այդ քահանան որ պէս զի իր կրօնական սրբմը հանէ, գայթակղութեանց տեղի չի տալու համար: Թէեւ «Արեւելք» այդ փիլոնազուրկ քահանային անունը չի տար, բայց սպառնալուքաբար ծանօթ տխրահոգակ Աթաւնան ըլլալու է:

— Սամսոնի առաջնորդ տեղապահ Տ. Գնէլ վրդ. կրկին դիմում ըրած է Պատրիարքարան, որպէս զի իրեն արտօնութիւն տրուի Պօլիս վերադառնալ, կուսակցական վէճերու պատճառաւ Սամսոն Քալալ ալլեա անկարելի դառնալով իրեն: Խառն ժողովը որոշել է առաջնորդական ընտրութեան նախագահելէ ետքը միայն յիշեալ վարդապետին վերագարձի արտօնութիւն տալ:

— Բարիկ բնակող Սամուէլեան եղբայրները՝ Էսկիտարի մէջ ունեցած իրենց մէկ տունը 3—4 հարիւր ոսկի արժողութեամբ, նոյն թաղին Ս. Կարապետ եկեղեցւոյն նուիրած են, փափագ յայտնելով որ այդ տունը իբր վարժարան ծառայէ թաղին տղոց:

— Վանի առաջն. տեղապահ Սահակ վրդ. հանրագիր մը ընդունել է, ուր կիրակնօրեայ վարժարաններու և կարող քարոզիչներ ունենալու պէտքը կը շեշտուի: Ստորագրողները կը խնդրեն որ, միջոցներ խորհուրդներու և կաթողիկոսի հոսանքներուն առաջը առնելու և ազգային կրթութեան գործը տնոնց ձեռքը չի ձգելու համար:

— Հոռոմի մէջ քանդակագործութեան ուսանող Մ. Միքայէլեանց պատրաստել է Գրիգոր Ջանչեանցի համար մահարձանի նախագիծ մը, որուն վրայ պիտի պատկերանայ հանգուցեալին բոլոր լաւ գործերը: Յառաջիկայ փետրվարին Պ. Միքայէլեանց կողմէ պիտի տանի մահարձանին կաղապարը, որ 10-11 մէթր մեծութիւն պիտի ունենայ: Նախագիծը սպայտ յղացուած է. նախ Գր. Ջանչեանցի կիսարձանը, որուն վերեւը իր մայրենի աչքը անոր կը մտուցանէ ծաղկէ փունջ մը ի նշան երախտագիտութեան, իսկ վարը առիւծ մը, սր պիտի հասկցնէ թէ հայոց գրականութիւնը զօրեղ ու հրեղէն առիւծ մը պիտի դառնայ, հայ ազգն որ իր պատմութիւնը ա-

մուր պաշտպանելու համար՝ աչկողմի անկիւնին մէջ, խուճաք մը որբեր, վառուժ մոմերը ձեռքերին՝ որոնք իրենց բարեբար հօր գերեզմանը կայցելեն: Չախ անկիւնին մէջ՝ պիտի պատկերանայ Ջանչեանցի տաղանդը քունի մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս.

Պրանսական «Պօլուս» թերթը հաւաստի ազբուրէ տեղակայած ըլլալ կը յայտնէ թէ՛ Բ. Իրան և Ֆրանսական կառավարութեան միջև յարաբերութիւնները խզուելուն պէս, Պ. Քօնսթան հեռագրով իր կառավարութեան խորհուրդ տուել է երկու զրահաւոր Պէլլուի զրկել և նոյն քաղաքին մաքսատունները գրաւել: Քօնսթան Պէլլուի իգմիբէն նախածար համարել է, որպէսզի առիթէն օգտուելով Պրանսայի ազգեցութիւնը զօրացնէ Սուրիոյ մէջ, և միւս կողմէ Թուրքիոյ հետ վաճառականական յարաբերութեանց մէջ խիստ բուռն խնդարում մը չի պատճառէ, ինչ որ միջազգային բողոքներու առիթ պիտի տար:

«Պօլուս» թերթը կաւելցնէ որ Պօլսոյ մէջ, երբ դեսպաններէն մին իր քայլերը կը պաշտպանելու որի մը չի զօր գիրք ստացած էր, երրորդ մը կը ջանար տպագրուցանել թէ՛ Թուրքիա բոլորովին անիրաւ չէր, թէ՛ ատիկայ միջազգային իրաւարարութեան ենթակայ խնդիր մըն էր, և թէ՛ ճնշողական միջոցներ ձեռք առնելը զօրաւորողոյն իրաւունքը գործադրել կը նշանակէր:

Կը սպասուի որ Սուլթանը իրատէսով մը Քարափներու գնումը և կարգ մը պարտապահանջներու գոհացում տրուելը պիտի հրամայէ հետեւեալ հիմերու վրայ: Քարափները 41 միլիոն ֆրանքով պիտի գնուին. պահանջատէրներուն 9 միլիոն ֆր. պիտի վճարուի: Կառավարութիւնը 5 միլիոն օսմ. ոսկի փոխառութիւն մը պիտի ընէ Քարափներու գնումը դիւրացնելու համար ինչպէս նաեւ պանք Օթոմանէն գրամ պիտի առնէ կարգ մը պարտքեր վճարելու համար:

Թուրքիա իբր երաշխաւորութիւն կուտայ տարեկան 22,000 ոսկիի եկամուտ մը, որ դրամական փոփոխութեանց կարգ մը գործողութիւններէն կը գոյանայ:

Կառավարութիւնը երեք ամսուան մէջ պիտի աշխատի պանք Օթոմանի հետ փոխառութեան մը մասին համաձայնիլ: Եթէ այդ

ժամանակամիջոցը անցնելով Քարափներու գնումին համար հարկ եղած դրամը չի վճարուի, Քարափներու ընկերութիւնը կրկին իր գործունէութիւնը պիտի վերսկսի: Եթէ թուրք կառավարութիւնը պայմանաւորելու երկարում պահանջէ, պարտաւոր պիտի ըլլայ կանխավճար մը ընել:

— Բազմութիւն բարձրաստիճան պատշօնեաներ Եթէ՛ն աքսորուել են, Սուլթանին դէմ գաւեր լաւելու և անոր վստահութիւնը չարաչար գործածած ըլլալու ամբաստանութեամբ: Չերբակալուածներուն մէջ Սուլթանին մէկ անձնական բժիշկն ալ կայ, որ Սուլթանին քիչ մը ուժով դեղ տուած ըլլալուն, անոր հարբուխին համար, կասկածի ենթարկուած էր, իբր չէ՛ Սուլթանը թունաւորելու մտադրութիւն ունենար:

— Էսիրենէի զօրաբանակէն կարգ մը զինուորներ և սպաներ երկար ժամանակէ ի վեր իրենց ամսավճարները ստացած չըլլալով սպառնալիք ըրել են տեղւոյն կուսակալին և չարչրկել են տէրութեան արկղակալը, Սուլթանը իսկոյն դրամ զրկել է զօրքերը հանդարտեցնելու համար: Բայց միեւնոյն ատեն հրամայել է Եթէ՛ն փոխադրել ըմբստ զօրախմբերը:

— Զինաստանի մահմետականները Պօքսէրներու հետ միանալու արգիլելու համար Սուլթանին կողմէ հոն զրկուած մուլաներու պատուիրակութիւնը Օտէսա վերադարձել է, ուրկէ Սեպտ. 1ին Պօլիս պիտի անցնի:

— Թուրքիոյ տնտեսական դրութիւնը հետզհետէ տագնապալից կը դառնայ, Օսմ. պանքան կը մերժէ 40,000 լիրաի նոր փոխառութիւն մը ընել, Միսախտարի ըմբին 200,000 ոսկի տալու համար պայման կառուցարկէ իրեն տրուած մենաշորհին 25 տարուան երկարումը, և ծխախոտի մաքսանենգներուն իբրեւ աւազակ նկատելու դատապարտուելու: Թուրք կառավարութիւնը անընդունելի նկատած է այս պայմանները:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Սոֆիայի թրամվէյի գործաւորները իրենց վարչութեան գիմում ընելով պահանջներ են որ իրենց ամսականները, որոնք 40-45 ֆր. չեն անցնիր, հակառակ օրական 16 ժամ աշխատութեան, աւելցնեն և ունէ գըժբախտութեան մը դէմ իրենց կեանքը ապահովցնեն, սպառնալով հակառակ դէպքին գործադուլ ընել: Բայց վարչութիւնը աննկատի թողլով գործաւորներուն դիմումը, այս վերջինները գործադուլ ըրած են, վար-

չութիւնը փոխանակ անոնց քս. հոցում տալու ուրիշ աշխատաւորներ գտած է որոնք սակայն երբէք չեն հասկնար այդ գործէն: Այս պատճառաւ բաւական աղէտներ պատահած են, ծեր յոյն մը և ուրիշ երկու մարդիկ թրամվայներու տակ մնացել են:

Ինչեալ երկուշափթի գործադուլ ընողները մեծ միթիւնկ մը կազմեցին, որոնց կը միանար նաեւ ժողովուրդը, կէս օրէն ետքը, երբ միթիւնկը պիտի հաւաքուէր, թրամվայներէն մին թրկովսքի Ուլիցայի մէջ 12 տարեկան գիւղացի աղջիկ մը կոսկուտել է, որ իսկոյն մեռել է: Այս դէպքը պատճառ եղաւ որ թրամվէյի վարչութեան դէմ ահեղ փոթորիկ մը փրթի: Տասը հազար հոգիէ բաղկացած բազմութիւն մը թրամվային վերախարձակեցաւ, և քարերով անոր ապակիները շախջախեց դէպքին պատահած ունի իսկ: Նոյն ամբոխը ուղղուեցաւ դէպի վարչութեան շէնքը, ուր նմանապէս մեծ փրաններ հասցուց: Ամբողջ մայրաքաղաքը մինչև գիշեր ոտքի վրալ էր: Սասիկանութիւնը չի կարողացաւ ամբսխին յուզման առաջն առնել, որով մեծ կոխ մընալ ծագեցաւ ոստիկաններու և ամբոխին մէջ և քանի մը հոգի վիրաւարուեցաւ: Վերջապէս հեծելազօրքը հասնելով ամբոխը ցրուեց:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Պաշտօնական ձիպութիւն:— Խմբագիրը բացակայ է. իսկ մենք այդ գործէն տեղեկութիւն չունինք: Վերագործին ձեր նամակը կը յանձնենք Շարժումի խմբագրին:

Ա. Մ. Զուրիցներիւ:— Չեր վերջին երկու գրութիւնները չէ կարելի տպել, խիստ խակ գրուածքներ ըլլալուն: Մենք ձեզի կը յորդորենք որ միտ տեղեկութիւններ հաղորդէք թղթակցութեան ձեռով, ինքնուրոյն գրութիւններուն մէջ դեռ անյաշող էք, կը կարծենք որ ձեր նախորդ գրածներն ալ նոյն պատճառաւ չեն տպագրուած:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ սմէն տեսակ դիմում՝ ընելու համար պէտք է գրիմել հետեւեալ հասցեով: Իւնիոն sk Զ'իդիսիւս Աւմ. sp Լ'հօրոս րիւ sp Լ'հօլ sp Շիւմի 2 Սուիս Ժընէվ Կարգադիր Յանձնաժողով

Отговорникъ: Мурадъ Ераносянъ